

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

1991թ. անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը ձեռնամուխ եղավ ազատ շուկայական տնտեսության անցմանը: Կառավարության նպատակն էր իրականացնել տնտեսական բարեփոխումների ծրագիր՝ շեշտը դնելով տնտեսական նոր համակարգի կայացման վրա: Մակրոտնտեսական համարժեք միջավայրի ստեղծումը ինքնին ենթադրում էր համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ներգրավումը: Հանգամանք, որն էլ իր հերթին պայմանավորեց համապատասխան տեղաշարժեր տնտեսագիտական, ֆինանսական, շուկայագիտական / մարքեթինգ / եզրաքանության / տերմինաքանության / մեջ: Մասնագիտական այս բառաշերտը բավականին թարմացվել է. այն ոչ միայն լրացվել է միջազգային եզրերով, այլև ստեղծվել են այդ եզրերի հայերեն համարժեքները՝ միաժամանակ հարստացնելով տնտեսագիտության ոլորտն ընդգրկող բառապաշարը: Ուշագրավն այն է, որ արդի տնտեսագիտական բառապաշարում մեծ տեղաշարժեր են տեղի ունեցել. մի կողմից տեղի է ունեցել հնարավոր միասնականացում, առանձին եզրերի մշակում, մյուս կողմից համաբարդման ճանապարհով տեղի է ունեցել շատ եզրերի կատարելագործում: Այս գործընթացը հարստացրեց արդի բառապաշարը, որը մեծ կարևորություն ունի եզրաքանության համար: Այսօր առևտրային / կոմերցիոն / բառապաշարը եականորեն փոխեց պատկերացումը բառապաշարի այդ ոլորտի մասին: Ժամանակակից եզրաքանության մեջ տնտեսագիտական եզրերը, վստահորեն կարող ենք ասել, գերակշռող տեղ են գրավում, ընդհանուր բառագիտության մեջ առևտրային բառապաշարը ուսումնասիրության ինքնուրույն բնագավառ է և արժանի է հետազոտման:

Ուսումնասիրելով այդ բառաշերտի առանձնահատկությունները՝ մենք եկել ենք այն եզրակացության, որ Թադ. Ավդալբեկյանի կազմած „Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանից,, / 1964 թ. / անցած շուրջ 30 տարիների ընթացքում փոխվել է վերաբերմունքը տնտեսագիտական եզրաքանության հանդեպ: Վերջին տարիներին ստեղծված բառարաններում արդեն նկատելի փոխված են այդ բառաշերտի բառերի թե՛ իմաստային, թե՛ բառակազմական առանձնահատկությունները: Անշուշտ, դա կապված է նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման, ինչպես նաև այդ հարաբերու-

թյունների՝ նոր կերպ ըմբռնման մտայնության հետ: Շատ չեն, իհարկե, հայերեն տնտեսագիտական բառարանները, բայց կազմության սկզբունքները նույնն են: Դրանք հիմնականում բացատրական բառարաններ են, իսկ ընդգրկված բառերը կամ արդեն եղած բառերի նոր մեկնաբանություններ են, կամ անգլերենից արված հաջող ու անհաջող թարգմանություններ են և կամ ռուսերենից հայերենին անցած որոշ եզրերի հայերենացված տարբերակներ են:

Տնտեսագիտական եզրերի մանրամասն քննությունը մեզ հանգեցրել է այնհետևության, որ այդ բառերը կարելի է դասակարգել հետևյալ խմբերի:

1. Բառեր, որոնք տնտեսագիտական բառապաշարի մեջ կայացած են առաջարկ, արտահանում, բաժնետեր, գնորդ, եկամտահարկ, մրցունակություն, մատակարար, սպառող, պահանջարկ, փոխարժեք և այլն:

2. Բառեր, որոնք ռուսերեն կամ միջազգային տարբերակների հայերեն համարժեքները գործածվում են այնպես, ինչպես կան Ավդալբեկյանի բառարանում: Օրինակ՝ արենդատոր-վարձակալ, ակցիա-բաժնետոմս, բալանս-հաշվեկշիռ, բրոկեր-միջնորդ, դեպոզիտ-ավանդ, պատենտ-արտոնագիր, սուբսիդիա-լրավճար, տարիֆ-սակագին, չեկ-վճարագիր, ռենտա-վարձավճար և այլն:

3. Բառեր, որոնք ամրագրված են Ավդալբեկյանի բառարանում, սակայն վերջին տասնամյակում դրանք փոխարինվել են նորերով՝ ելնելով ժամանակի պահանջից: Օրինակ՝ դեմպինգ-դեմածք-զնագցում, դեֆիցիդ-պակասորդ-բացուրդ, դեֆլյացիա-թերալցում-զնանկում, ինդոսանտ-փոխգործող-փոխգրառու, պրեզենտացիա-ներկայումս-շնորհանդես, ռեկլամա-ազդարք-ազդ, կոմի-վոյաժեր-ծախսակատար-շրջավաճառ, լիցենզիա-թույլտուք-թույլատրագիր, օպտոմ-մեծուրդ-մեծածախ և այլն:

4. Նոր բառեր, որոնք ստեղծվել են շուկայական հարաբերությունների ձևավորման պահանջով. տնտեսության տարբեր ոլորտներ / ֆինանսական, բանկային, կառավարման, շուկայագիտության / ընդգրկող բառեր են դրանք: Օրինակ՝ աուդիտ-հաշվեստուգում, ամորտիզացիա-մաշվածքագրում, դեկորտ-ապրանքագեղչ, դիլեր-գործարքառու, դիվեսիֆիկացիա-բազմատեսուկացում, իպոտեկա-գրավադրում, լոբբի-շահախումբ, կոնսոլիդացիա-միաբերում, կոնսիգնացիա-վաճառատվություն, կոնսորցիում-համախումբ, չարտեր-վարձերթ, ստագֆլյացիա-լճագնաճ, օպցիոն-ընտրամք և այլն:

Ինչպես տեսնում ենք, միջազգային եզրերը հնարավորին չափով փոխարինվել են հայերեն համապատասխան բառերով: Իսկ միջազգային եզրեր ասելով ի՞նչ ենք հասկանում: Միջազգային եզրեր համարվում են այն բառերը, որոնք տարբեր լեզուներում կան, սակայն դրանց բառարմատները լատիներեն կամ հունարեն ծագում ունեն: Այդ եզրերը իրենց յուրահատուկ

ծևավորումն են ստացել եվրոպական լեզուների ազդեցությամբ և նույնիսկ ծեռք են բերել նոր իմաստներ: Տնտեսագիտական եզրերի մեջ կան բառեր, ա) որոնք բառացի թարգմանություններ են այլ լեզուներից, ինչպես բիզնես (անգլ. business) - գործ, լիզինգ (անգլ. leasing) - վարձակալություն, ավանս (ֆրանս. Avance) - կանխավճար, իպոտեկա (հուն. Hypotheke - գրավ) - գրավադրում, բ) բառեր, որոնց հիմնական իմաստները պահպանվել են, բայց որոշ բառակազմական նրբերանգներով՝ սալդո / իտ. Saldo - մնացորդ /- հաշվեմնացորդ, սերտիֆիկատ / լատ. certificate - հաստատում են / - հավաստագիր, մարքեթինգ /անգլ. market - շուկա/ - շուկայավարում, դեֆիցիտ /լատ. deficit - պակաս/ - պակասուրդ, լիցենզիա / լատ. licentia - իրավունք/ - թույլատրագիր, գ/ բառեր, որոնց նախնական իմաստը մթազնվել և այսօր վերածվել է այլ իմաստների, օրինակ՝ բանկ / իտ. Banca - աթոռ / - դրամատում, վեկսել / գերմ. Wechsel- փոխանակություն/- մուրհակ, գարանտ/ֆրանս. Garantir - ապահովել/- երաշխավոր, դիվիդենդ /լատ. dividendus - բաժանման տրվող /- շահութաբաժին և այլն:

Հնայած մեծ ջանքեր են ներդրվել օտարազգի եզրերի թարգմանության, ինչպես նաև մի շարք եզրերի հայերեն համարժեքը ստեղծելու նպատակով, սակայն դեռևս չեն միօրինականացվել: Կառավարական հուշագրերում, զանգվածային լրատվական միջոցների լեզվում հաճախ հայերեն համարժեքի հետ մեկտեղ գործածվում է միջազգային եզրը: Օրինակ՝ ակցիզ, բորսա, գրանդ, դեպոզիտ, դեֆիցիտ, ինդեքս, ինվեստիցիա, ինֆլյացիա, մաքս, մենեջմենտ, սուբսիդիա, սերտիֆիկատ, օֆշոր և այլն:

Տնտեսագիտական եզրերի հայերեն համարժեքների մի մասը հաստատվել է Լեզվի տեսչության կողմից, սակայն մասնագիտական կողմնորոշումը պահանջում է այդ եզրերի բովանդակային նշանակության չանդեմում: Ասենք՝ վաուչեր, սեփակալություն բառերը թարգմանվել են հավաստագիր՝ անտեսելով նրանց կիրառական նշանակությունը: Լիազորված մարմնի կողմից ցանկացած հաստատված փաստաթուղթ կարող է համարվել հավաստագիր:

Այսպես՝ ծագման, որակի վերաբերյալ տրված սերտիֆիկատը հավաստագիր է՝ որևէ օբյեկտի սեփականաշնորհմանը մասնակցելու համար: Այդ իսկ պատճառով վաուչերը սեփականաշնորհման հավաստագիր պետք է թարգմանել: Այս բառակապակցությունը հստակ պատկերացում է տալիս իրողության մասին: Կամ՝ առիվատիզացիա բառը սկզբում թարգմանվել է սեփականաշնորհում, իսկ հետո՝ մասնավորեցում, սեփականագրում: Այս եզրի մասնավորեցում հայերեն համարժեքը տարբերվում է սեփականաշնորհում եզրից այնքանով, որ սեփականաշնորհել կարելի է որևէ ձեռնարկություն, հող, շինություն, իսկ արդյունքում մասնավորեցվում է տնտեսության համապատասխան ոլորտը: Այսինքն՝ մաս-

նավորեցում և սեփականաշնորհում բառերը էականորեն տարբերվում են միմյանցից: Այժմ մեկ այլ բառի քննություն. դիվետսիֆիկացիա եզրը թարգմանվել է բազմազանեցում, որը հաստատվել է Լեզվի տեսչության կողմից: Դիվետսիֆիկացիա լատիներեն նշանակում է զանազանություն անել: Սակայն այս եզրը տնտեսագիտության մեջ ունի երկու նշանակություն՝ ա/ տեսականու ծավալում, ապրանքատեսականու փոփոխություն տվյալ ձեռնարկության կողմից՝ սնանկացումից խուսափելու նպատակով, որպեսզի արտադրության արդյունավետությունը բարձրացվի:

բ / Ռիսկի աստիճանի նվազման դեպքում կապիտալ ներդրումներ կատարելը ակնկալելով բարձր շահույթներ:

Դիվիդենտ բառի հայերեն համարժեքը Լեզվի տեսչության որոշմամբ հաստատվել է շահաբաժին բառը: Այնինչ դիվիդենտ բառի համար ավելի հարմար է շահույթ բառը: Ինչո՞ւ: Շահույթ նշանակում է ընկերության / կորպորացիայի / ստացած ընդհանուր շահույթը, որից բաժին է ընկնում ընկերության մեջ ընդգրկված փայտերերին:

Աուդիտ բառը փոխարինվել է հաշվարար բառով, բայց արդի տնտեսագիտական համակարգում աուդիտը միայն հաշվարարը չէ, այն նաև ֆինանսական և հաշվապահական վերահսկողություն է նշանակում: Իսկ աուդիտորը այն վստահված անձն է, որը զբաղվում է ֆիրմայի ֆինանսատնտեսական ոլորտի ստուգմամբ: Նրանք ունեն հատուկ որակավորում և թույլտվություն այդ գործունեության համար:

5. Կան եզրեր, որոնք դեռևս հայերեն համարժեքներով չեն փոխարինվել: Օրինակ՝ դիսաաչ – ժամկետից շուտ նավի բարձման կամ բեռնաթափման համար պարզևավճար: Կարելի է կազմել այսպիսի բառ՝ նավաբեռնապարզև:

Ղոտագիա - դրամական միջոցներ, որոնք անվճար տրվում են պետությունից, ինտեգրացիա - տնտեսության ամբողջականացում և միասնական տնտեսական քաղաքականության իրականացում: Միգրացե հարմար լինի գործածել միատնտեսականացում համարժեքը: Կոնսալտինգ - խորհրդատվական ընկերությունների գործունեություն / խորհրդաընկերություն / , տոանսֆերու - փոխանցիկ վճար / փոխանցավճար / և այլն:

Որո՞նք է եզրերի չթարգմանելիության պատճառը:

1. Ստերեոտիպի առկայությունը: Այսինքն՝ միջազգային եզրերի մի մասը չի թարգմանվում, որովհետև անգլերենից տվյալ եզրը թարգմանվում է ռուսերեն, ռուսերենից հայերեն: Այս դեպքում երևույթի, իրողության, իսկության բովանդակությունը հայերենին անցնում է աղավաղված: Տվյալ եզրի ընկալունակությունը

շատ ավելի բարձր կլինեն, եթե անմիջապես անգլերենից թարգմանվեր հայերեն:

2. Միջազգային եզրերի թարգմանելիությունը կարելի է հեշտացնել, եթե չմոռանանք արևմտահայ գրական լեզուն: Չէ՞ որ շատ բառերի հայերեն համարժեքներն արդեն վաղուց ստեղծված են, ինչպես՝ բանկ- դրամատուն, ինֆլացիա- սղաճ և այլն:

3. Ամենևին իարկ չկա, որ միջազգային եզրերը թարգմանվեն հայերեն արհեստականորեն կազմելով նոր բառ, հատկապես այն եզրերը, որոնց արմատները արձանագրված են լատիներենում, հունարենում և իտալերենում: Օրինակ, ինչ կստացվեր, եթե ռիսկ բառը փոխարինվեր հայերեն համարժեքով՝ համարձակություն, երբ ռիսկ բառը բիզնեսի /գործի/ լեզվում ամենագործածական բառերից է: Կան մի շարք բառակապակցություններ այդ բառով կազմված, որոնք արտահայտում են ռիսկերի տեսակները՝ ֆինանսական ռիսկ, վարկային ռիսկ, տեղեկատվական ռիսկ, իրավական ռիսկ, ներքին ռիսկ, ինքնատիպության ռիսկ և այլն:

Մեր կողմից արված քննությունից եկել ենք այն եզրակացության, որ մամուլում, հեռուստալեզվում հաճախական կիրառություն ունեն միջազգային եզրերով հայոց լեզվի բառակազմական օրինաչափություններով կազմված բառերը: Օրինակ՝ լիզինգառու, լիզինգային, լիցենզավորում, ինտեգրում, քլիրինգային, օֆշորային և այլն: Իսկ դրանցով կազմված բառակապակցությունները հաստատագրված կաղապարներ են դարձել մասնագիտական բառապաշարում: Օրինակ՝ ակցիզային հարկ, դոմոր երկիր, տոկոսային մարժա, տրանսի ձևակերպում, ակտիվների տրանսֆորմացիա, վարկային պորտֆել, ինստիտուցիոնալ միջավայր, պարտադիր լիցենզավորում, մարքեթինգային ծառայություն, ֆիսկալ համակարգ, ինտեգրացիոն գործընթաց, հոլդինգային ընկերություն, տրաստային ընկերություն, տրանսֆերտային վճարներ, տնտեսական ռենտա, օֆշորային գոտիներ, արժութային օպցիոն, քլիրինգային պալատ և այլն:

Այսինքն պարզորոշ է այն հանգամանքը, որ ինչքան էլ միտված լինենք այլազգի եզրերի հայացմանը, միևնույն է, կան այնպիսի միջազգային եզրեր, որոնց փոխարինումը հայերեն արհեստական ստեղծված եզրերով, դառնում է անհեթեթություն: Տնտեսական նոր համակարգին դրանք համահունչ են և ունեն արդիական հնչեղություն:

Այժմ անդրադառնանք տնտեսագիտական եզրերի բառակազմական օրինաչափություններին: Եզրերի կազմության ու կառուցվածքի տեսակետից առանձնանում են բառ – եզրերը /տերմինները/ և բառակապակցություն – եզրերը

/տերմինները/: Հայտնի է, որ բառ – եզրը հիմք է դառնում բառակապակցություն եզրի համար: Ինչպես՝ հարկաբյուջետային քաղաքականություն, հարկային դաշտ, հարկային մարմին, ակցիզային հարկ և այլն: Բառ-եզրերը բացառապես համաբարդմամբ են ստեղծված: Պարզ տերմինները անհամեմատ քիչ են, բայց, դրանք, արտահայտելով հիմնական հասկացություններ, անսահմանափակ հնարավորություններ են ընծեռում եզրաբանության համար: Ինչպես՝ քեռ-բեռնագիր, բեռնարգելք, բեռնափոխադրում, բեռնապահովագրում: Վոնել-գործառու, լիզինգառու, վարկառու, շահառու: Տալ – գործատու, վարկատու, ավանդատու, իրավատու, փոխանցատու: Վարձ-վարձակալ, վարձակալագիր, վարձավճար, վարձաչվերթ: Վարկ-վարկառու, վարկարժան, վարկավարձակալություն, վարկունակ: Վճար-կանխավճար, լրավճար, վճարագիր, վճարահաշիվ, վճարունակ և այլն: Եզրերի /տերմինի/ առանձնահատկությունն էլ այն է, որ հիմնական եզրի իմաստի հիման վրա ձևավորվում է բարդ կազմությամբ բառը: Տնտեսագիտական եզրերի մեջ, ինչպես վերը նշեցինք, ավելի սակավ են արմատական և ածանցավոր բառ-եզրերը: Օրինակ՝

ակցիզ	-	բաղ
դիսկոնտ	-	զեղչ
կրեդիտ	-	վարկ
ավիստա	-	մակագիր
աուկցիոն	-	աճուրդ
բրոկեր	-	միջնորդ և այլն:

Բարդ բառերի մեջ առանձնանում են համադրական ու բարդ ածանցավոր բառերը, և դա պատահական չէ: Ձևավորված նորատիպ տնտեսական հարաբերությունների արդյունքում ամբողջականացվեց և բարդության ճանապարհով մշակվեց ու ստեղծվեց մի բառապաշար, որն իր կատարելությամբ միաժամանակ ներդաշնակում էր երևույթի էությանը :

արենդատոր	-	վարձակալ
ավալ	-	երաշխագիր
ավանս	-	կանխավճար
բալանս	-	հաշվեկշիռ
ինֆլացիա	-	գնաճ, սղաճ
կրեդիտոր	-	վարկատու
սերտիֆիկատ	-	հավաստագիր
տենդեր	-	մրցառք և այլն:

Բարդ, ածանցավոր բառերը նախորդներին զիջում են իրենց քանակով՝

արենդա	-	վարձակալություն
դեվալվացիա	-	արժեզրկում
կոնվենցիա	-	համաձայնագիր
մարքեթինգ	-	շուկայագիտություն
քվոտա	-	չափաբաժին և այլն:

Ինչպես քննարկումն է պարզել, բառ-եզրերը առանձնանում են իրենց բառակազմական և գործառական առանձնահատկություններով, որոնք, զուտ բառակազմական տեսանկյունից ելնելով, բարդ համադրական կառույցներ են: Կան բառ-եզրեր, որոնց գործածությունը խիստ մասնագիտական կողմնորոշ-մամբ է պայմանավորված: Դրանք միջազգային եզրերով կազմվածներն են և ունեն գործածության ընդգրկում ուլորտ: Ինչո՞վ է բացատրվում այդ փաստը, որ հայերեն համարժեքին զուգահեռ կան եզրեր՝ հայերեն բառակազմական կաղապարայնությամբ: Վերջին տարիներին գործածական է դարձել լիզինգ եզրը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործարար շրջաններում այդ երևույթը նոր բովանդակություն է ձեռք բերել: Լիզինգի կիրառության միջազգային փորձը ցույց է տվել, որ հայերենում դրան զուգահեռ կարելի է գործածել վառձակալություն եզրը: Մասնագետների կարծիքով պարզապես վառձակալություն եզրի կիրառական նշանակությունը ինչ-որ տեղ սահմանա-փակում է լիզինգ գործառական նշանակությունը: Լիզինգ եզրով կազմվել են մի շարք բառեր, որոնք արդի առևտրային / կոմերցիոն / բառապաշարի անբակտելի մասն են կազմում լիզինգառու, լիզինգատու, լիզինգավճար / ային /, լիզինգային / պայմանագիր / և այլն: Թեպետ երբեմն այդ եզրերով կազմվում են նախադասություններ, որոնք անհարիր են դառնում հայեցի լեզվամտածո-ղությանը: Օրինակ՝ կարդում ենք. „...բայց լիզինգում ամփոփված տնտե-սական ֆունկցիաների բազմազանությունը ևս կարող է ծառայել տնտեսության զարգացմանը: Ի մասնավորի՝ լիզինգ վաճառահանման ֆունկցիայով և սինեոզիկ մուտհալիկատվությամբ օժտվածությունը ֆիզիկական անձի շահերի տեսանկյունից, կարող է խորապես արտացոլվել սահմանման մեջ„ /Ֆին.և էկ., 2001, հ 6/: Կամ՝ „Հայաստանը ձեռք է բերում զարգացման իրավունքի քվոտում„ որի լիարժեքության համար անհրաժեշտ է արտաքին իրապես կոմայեմենտալ ճկուն քաղաքականություն„ /Ֆին.և էկ., 2001, հ 6/:

Այսպիսով, բառ-եզրերը իրենց գործառական նշանակությամբ մեծ տեղ են զրավում արդի տնտեսագիտական բառապաշարում, եզրաստեղծման /տերմի-նաշինության/ գործընթացը շարունակվում է՝ ելնելով անցումային տնտեսու-թյանը բնորոշ բազմաբնույթ տարատեսակությամբ, նոր տեսակի գործարար հարաբերությունների ձևավորմամբ:

Բառակապակցություն-եզրերի կազմության մեջ ևս նկատելի է հետևյալ օրինաչափությունը՝ կան հայերեն բաղադրիչներով կազմված բառակապակցու-թյուններ՝ առևտրային բանկ, արտաքին առևտուր, արժեթղթերի շուկա, անշարժ գույք, ազատ առևտրի գոտի, բաց տնտեսություն, զուտ տնտեսական շահույթ, զուտ ազգային արդյունք, ժամկետային ավանդ, համախառն ներքին արդյունք,

համաշխարհային բանկ, կապիտալի շուկա, շուկայական գին, շուկայական պահանջարկ, շուկայական տնտեսություն, պետական պարտք, սահմանային արդյունք, սպառողական զանրյուղ, տնտեսական շահույթ և այլն: Կամ նաև միջազգային եզրերով կազմվածներ, որոնք հաստատագրված են տնտեսագիտական եզրաբանության մեջ և անսպառ գործածություն ունեն թե հեռուստալեզվում, թե մասնագիտական տեքստերում: Դրանցից են բարտերային առևտուր, դեբիտորական պարտք, ինֆլացիոն խզում, ինտեգրացիոն գործընթաց, վարկային ռիսկ, տոկոսային մարժա, տարիֆային համակարգ, տրանսֆերտային վճարներ, տրաստային վճարներ /գործառնություն, ընկերություն /, հոլդինգային ընկերություն, լիցենզիոն առևտուր, ֆյուչերսային շուկա, ֆորվարդային շուկա, քլիրինգային պալատ, արժույթային օպցիոն և այլն: Բառակապակցություն- եզրերի վերլուծությունը մեզ հանգեցրել է այն եզրակացության, որ բառակապակցության բաղադրիչ կազմող միջազգային եզրը կամ կազմված է ագիա, օհոն փոխառյալ ածանցներով՝ ծախքերի ինֆլացիա, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, տնտեսական ինտեգրացիա, կամ միջազգային եզրի /տերմինի/ հայերենացված տարբերակներով՝ քլիրինգային արժույթ, տրանսֆերտային գին, ֆյուչերսային գործարք, բոնուսային զեղչեր, ինժինյերային ընկերություն, օֆշորային կենտրոններ:

Այսպիսով, մասնագիտական այս բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ եզրային /տերմինային / համակարգը անընդհատ համալրվում է, չնայած մի դեպքում եզրերի բազմազանությունը կամ թյուրիմացությունների է հանգեցնում, կամ անորոշություն է ստեղծում, որից հետևություն ենք անում, որ կան եզրեր, որոնք դեռևս կայունացած չեն, և դա բնական է: Տնտեսության զարգացման անցումային փուլում, տնտեսական բարեփոխումների գործընթացում տրամաբանական չէ այսօր ունենալ լիարժեք համակարգված տնտեսագիտական բառապաշար: Ակադ. Էդ.Աղայանի «մեկ հասկացությանը մեկ բառային ձև» սկզբունքը դեռևս կիրառելի չէ առևտրային / կոմերցիոն / բառապաշարի ձևավորման գործընթացում:

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

2. Ավդալբեկյան Թ., Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարան, Ե., 1964:

3. Աղաբեկյան Ա., Անգլերեն – հայերեն բառարան, Ե., 1998:

4. Կիրակոսյան Գ., Դուշյան Զ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան, Ե., 1999:

5. Մեյթիսանյան Փ., Նոր բառերի բացատրական բառարան, Ե., 1996:

6. Փոլ Սամյուելսոն, Տնտեսագիտություն, Ե., 1995:

7. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982:

8. Զայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա, 2001- 2002: